

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.255>

Examining the Miniatures of the Gospel № 3756 of Matenadaran named after Mesrop Mashtots

Monte Matevosyan

<https://orcid.org/0000-0003-1251-2233>

YSU Faculty of History, Chair of History and Theory of Armenian Art

monte.matevosyan.95@gmail.com

Keywords: Armenian miniature, Gospel, Ammonius of Alexandria, evangelists, incipit page, khoran (canon table).

When studying the history of Armenian miniature, it becomes clear that the number of manuscripts that have reached us from the 12th century is relatively less. As in the case of handwritten manuscripts created in other centuries, among the manuscripts created in the 12th century, the Gospels make up a significant number. The original M 3756 belongs to the series of Gospels that have come down to us. It does not have a written date, the place of writing is also unknown, and the writer is "Hovhannes". The original does not have scenes of the Life of Christ, but it is distinguished by the images of Ammonius of Alexandria and the evangelists, and the variety of khoran (canon tables) and marginal decorations. The image of Ammonius of Alexandria, the author of the Ammonian tablets, gives this manuscript its own uniqueness, because the matenadaranian miniature is the unique example found in the Gospels in the history of Armenian miniatures, which we know. The painter showed his unique style while depicting the Evangelists. Through khoran (canon table) ornaments and title pages, it is possible to follow the development of the decorated headpiece of khoran and marginal ornaments. The study of the miniatures allows us to conclude that the painter was familiar with the former Armenian Greater (Mets Hayk') school of miniatures; also, it is not excluded, either directly or indirectly, with the Byzantine Ottonian book art. Through the miniatures of this manuscript, it is possible to see the trends and characteristic features of the development of the Armenian miniature art of the 12th century.

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 3756 Ավետարանի մանրանկարների քննություն

Մոնթե Մաթևոսյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետ, հայ արվեստի պատմության և տեսության ամբիոն

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 255-267



Received: 09.06.2024

Revised: 18.07.2024

Accepted: 30.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Հիմնաբառեր` Հայկական մանրանկարչություն, Ավետարան, Ամոնիուս Ալեքսանդրացի, ավետարանիչներ, անվանաթերթ, խորան:

Հայկական մանրանկարչության պատմությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ XII դարից մեզ հասած ձեռագրերի թիվը համեմատաբար ավելի քիչ է: Ինչպես մյուս դարերում ստեղծված ձեռագիր մատյանների դեպքում, մասնավորապես XII դարում ստեղծված մատյանների շարքում զգալի թիվ են կազմում Ավետարանները: Մեզ հասած Ավետարանների շարքին է պատկանում ՄՄ 3756 բնագիրը: Այն հստակ թվագրություն չունի, ստեղծման վայրը ևս անհայտ է, գրիչը «Յովանէսն» է: Բնագիրը չունի տերունական շարք, սակայն առանձնանում է Ամոնիուս Ալեքսանդրացու ու ավետարանիչների պատկերներով, խորանների ու լուսանցազարդերի բազմազանությամբ: Ամոնյան տախտակների հեղինակ Ամոնիուս Ալեքսանդրացու պատկերն ինքնըստինքյան յուրահատկություն է հաղորդում այս բնագրին, քանի որ մատենադարանյան մանրանկարը հայ մանրանկարչության պատմության մեջ Ավետարաններում հանդիպած մեզ հայտնի եզակի օրինակն է: Ծաղկողն իր յուրահատուկ ոճն է ցուցադրել Ավետարանիչներին պատկերելիս: Խորանազարդերի ու անվանաթերթերի միջոցով հնարավորություն է ստեղծվում հետևելու գլխազարդերի և լուսանցազարդերի զարգացմանը: Մանրանկարների ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ ծաղկողը ծանոթ է եղել նախկին Մեծ Հայքի մանրանկարչական դպրոցին, չի բացառվում նաև ուղղակիորեն կամ անուղղակիորեն բյուզանդական օտտոնյան գրքարվեստին: Այս մատյանի մանրանկարների միջոցով հնարավորություն է ստեղծվում տեսնելու XII դարի հայկական մանրանկարչական արվեստի զարգացման միտումներն ու բնորոշ գծերը:

Рассматривание миниатюр Евангелия № 3756 Матенадарана имени Месропа Маштоца

Монте Матевосян

Исторический факультет ЕГУ, кафедра истории и теории армянского искусства

Ключевые слова: Армянская миниатюра, Евангелие, Аммоний Александрийский, евангелисты, заглавный лист, хоран.

При изучении истории армянской миниатюрной живописи становится ясно, что количество дошедших до нас рукописей XII века относительно меньше. Как и в случае с рукописями, созданными в другие века, в XII веке, значительное число составляют Евангелия. Оригинал М 3756 принадлежит к дошедшей до нас серии Евангелий. Конкретной даты у него нет, место создания также неизвестно, мастер - "Иованес". В оригинале нет сцены из жизни Христа, но он отличается изображениями Аммония Александрийского и евангелистов, разнообразием хоранов и маргинальных декоров. Образ Аммония Александрийского, автора аммонийских табличек, придает

этой рукописи свою уникальность, поскольку матенадаранская миниатюра является уникальным примером, встречающимся в Евангелиях в истории армянских миниатюр. Художник показал свой уникальный стиль, изображая евангелистов. Через хораны и заглавные листы можно проследить за развитием заставок и маргинальных декоров. Изучение миниатюр позволяет сделать вывод, что художник был знаком с прежней школой миниатюр Великого Айка, не исключено ни прямо, ни косвенно с византийским оттонским искусством книги. Через миниатюры этой рукописи можно увидеть тенденции и характерные особенности развития армянского миниатюрного искусства XII века.

* * *

Ներածություն: Հայ մանրանկարչության պատմությունն ուսումնասիրելիս նկատելի է, որ ի տարբերություն մյուս դարերից մեզ հասած ձեռագիր մատյանների՝ ԺԲ դարում ստեղծված օրինակներում մանրանկարները սակավաթիվ են և աչքի չեն ընկնում իրենց շքեղությամբ: Այդ ամենի գլխավոր պատճառներից էին տվյալ պահին Հայաստանում ստեղծված քաղաքական իրադրությունն ու սելջուկ-թուրքերի ներխուժումները [Դурново, 1957, 25, Տէր Ներսէսեան, 1966, 12, Հայկական մանրանկարչություն, 2014, 18]: Վերջիններիս ներխուժումները մեծ հարված են հասցնում մշակութային կյանքին [Դурново, 1957, 25, Տէր Ներսէսեան, 1966, 12, Հայկական մանրանկարչություն, 2014, 18]: Այդ ամենով հանդերձ XII դարում ձեռագիր մատյաններ ստեղծվել են և՛ բուն Հայաստանում, և՛ Կիլիկիայում: Կարևոր է այդ շրջանի ձեռագիր մատյանների ուսումնասիրությունը հատկապես հայկական մանրանկարչության պատմության տեսանկյունից: Ի դեպ, XII դարի հայկական մանրանկարչությունը համեմատաբար քիչ է ուսումնասիրվել¹: Մաշտոցյան Մատենադարանն այն գլխավոր պահոցներից է, որտեղ այդ ժամանակահատվածի մատյանների մեծաթիվ օրինակներ են պահվում: Ձեռագիր մատյանների հիմնական մասը կազմում են Ավետարանները:

Ի տարբերություն XI դարում ստեղծված մատյանների՝ XII դարում ստեղծված օրինակների չափերը որոշակիորեն նվազում են [Կазарян, Манукян, 1991, 69]: Մատյանների մեծ մասը գրվում են թղթի վրա [Կазарян, Манукян, 1991, 69]: Պահպանվում է Ավետարանների նախկին կառուցվածքը [Կазарян, Манукян, 1991, 69]:

XII դարի մատյանների շարքին է պատկանում ՄՄ 3756 Ավետարանը, որի մանրանկարները մասնակիորեն են ուսումնասիրված և կարիք կա լիարժեք ուսումնասիրման [Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ., 1965, 1077]:

Ձեռագրի պատմությունը: Ավետարանը հստակ թվագրություն չունի, ստեղծման վայրը ևս անհայտ է, գրիչը «Յովանէսն» (այսուհետ՝ Հովհաննես) է, զիրը ուղղագիծ երկաթագիր է [Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ., 1965, 1077]: Բնագիրը չունի տերունական շարք, ինչպես այդ

¹ ԺԲ դարի մանրանկարչության ուսումնասիրման մեջ զգալի դեր ունի արվեստագետ Տ. Իզմայլովան: Տե՛ս Իզմայլովա Т., Каринская рукопись 1186 г. (Иван С-65), Ерևան, 1974, ՊԲՀ, № 1, էջ 259-268, Заглавные листы Харбердской рукописи 1160 г., Ерևան, 1975, ՊԲՀ, № 4, էջ 154-168, Армянская миниатюрная живопись XII века (по нескольким рукописям Матенадарана), Ерևան, 1979, ՊԲՀ, № 4, էջ 165-171, Декор двух датированных и локализованных армянских рукописей XII века, Ерևան, 1983, ՊԲՀ, № 2-3, էջ 240-248, Маргинальный декор Ованаванского мартиролога-чарынтира, Ерևան, 1987, ՊԲՀ, № 1, էջ 183-194, Мастер и образец. Ромклайская модель, вторая половина XII-начало XIII века, Ерևան, 1989, ՊԲՀ, № 3, էջ 174-191:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի N° 3756 Ավետարանի մանրանկարների քննություն

շրջանում ստեղծված Ավետարանների մեծ մասը, սակայն ընդգրկում է 4 ավետարանիչների, «Ամովն Աղէքսանդրացու» (այսուհետ՝ Ամմոնիոս Ալեքսանդրացի), խաչի 1, խորանների 10 մանրանկար, կիսախորան և լուսանցազարդ [Եգանյան Օ., Ջեյթունյան Ա., Անթաբյան Փ., 1965, 1077]: Մատյանից (սկիզբ) պակասում է առնվազն երեք թերթ: Ավետարանը սկսվում է հետագայի հիշատակարանով (1ա), որում նշված են Սուրբիաս րաբունապետի ու նրա հայր Ստեփանոս արքեպիսկոպոսի անունները: Նմանատիպ ընդմիջարկության հանդիպում ենք 81ա էջում: Այստեղ հիշատակվում են Շմավոն րաբունապետն ու Սյունյաց նահանգի արքեպիսկոպոս Ստեփանոսը, որն Ավետարանը նվիրել է Անգեղակոթի Սուրբ Սարգիս եկեղեցուն: Այս եկեղեցու մասին նշվում է Ալիշանի «Միսական» աշխատությունում: Հեղինակը XV դարակեսի Ավետարանի հիշատակարանում ընթերցում է. «...եկեղեցին կոչի Ս. Սարգիս, ուր Ստեփանոս եպիսկոպոս դնէ զգիրսն, առ Շմաւոնի րաբունապետին, և շէնն կոչի գիւղաքաղաք Անկեղակոթ»: Իսկ մեկ այլ հիշատակարանում (1431 թ.) եկեղեցին Ս. Լուսավորիչ, Ս. Թագավոր է կոչվում [Ալիշան, 1893, 212]: Ալիշանն իր մեկ այլ աշխատության մեջ Երևանի արքեպիսկոպոսների շարքում հիշատակում է Ստեփանոսին (1837 թ.), [Ալիշան, 1890, 316]:

ՄՄ 3756 Ավետարանի 1ա էջում գտնվող հիշատակարանին հաջորդող էջը ևս ընդմիջարկություն է: Վերը թվարկված հիշատակարաններից գատ՝ կա նաև գրչի հիշատակարան (207ա, 267ա), որում և հիշատակված է Հովհաննեսի անունը. «Յիսուս ողորմեա: Յովանիսի. Մեղաւորի: Գրողիս. Սուրբ աւետարանիս»:

Ձեռագրի նկարազարդման համակարգը Խաչի պատկերում: Ավետարանի մանրանկարները սկսվում են 2բ էջից, որտեղ ուղղանկյուն շրջանակի մեջ մեծադիր, հավասարաթև խաչ է պատկերված (Նկ. 1): Շրջանակի չորս անկյուններում հովհարաձև նախշեր են: Խաչն ասես խարիսխի միջոցով հենված լինի կլոր շրջանակին, որում նույնպես փոքրիկ հավասարաթև խաչ է, ինչն էլ իր հերթին հենվում է պատվանդանին: Ստորին հատվածից երկու արմավատերև է դուրս գալիս: Ուղղանկյուն շրջանակում գերակշռում են հյուսածո զարդանախշերը:



Նկ. 1

Խաչի պատկերների հանդիպում ենք Ասորիքի ու Վրաստանի վաղ շրջանի պատկերագրող ձեռագրերում, սակայն Հայաստանում դրանք ավելի լայն տարածում են գտել, ինչը Հայաստանում խաչի առանձնահատուկ պաշտամունքի վկայությունն է [Հայկական մանրանկարչություն, 2014, 41]: Խաչ պատկերող մանրանկարների հանդիպում ենք նաև Վնտկ. 116, ՄՄ 5547, 3784, 10434 Ավետարաններում: Սովորաբար խաչերը տեղ են գտել ավետարանական տեքստերից առաջ (ՄՄ 7735, 288), [Տեր Ներսեսեան, 1966, 36, Der Nersessian, 1973, 4]: Դրանք պատկերել են տարբեր զարդանախշերի հետ համակցված: Խճճված ժապավեններով կազմված մեծ խաչ է պատկերված 974թ. Ծուղրուքի Ավետարանի հիշատակարանում, և նույն զարդանախշն օգտագործվել է 1001 թ. ՄՄ 7739 Ավետարանում [Der Nersessian, 1973, 5]: Ծաղկազարդված շրջանակում ամփոփված հավասարաթև խաչ տեսնում ենք ՄՄ 6763 ձեռագրում, որը ստեղծվել է 1113 թ. Դրազարկում [Ազարյան, 1964, 18, Der Nersessian, 1993, 22]: Պատվանդանի վրա կանգնած հյուսածո խաչ է պատկերված Եղմ. 1924 Ավետարանում (1064 թ.), [Արքեպիսկոպոս Սիրմէան, 1948, 325]:

Ամնոնիոս Ալեքսանդրացու պատկեր: Ավետարանի հաջորդ մանրանկարում Ամնոնիոս Ալեքսանդրացին է (Նկ. 2): Նա եղել է Ամնոնյան տախտակների հեղինակը և մինչև Եվսեբիոս Կեսարացու կողմից համաձայնության տախտակների կազմումը նախաձեռնել է նման աշխատանք [Cross F. 1974, 45]¹: Հայկական մանրանկարչական արվեստում Ամնոնիոսին պատկերող այլ մանրանկար մեզ առայժմ հայտնի չէ: Հիշյալ մանրանկարում նա պատկերված է բարակ պլանների վրա հենված սրածայր կամարի ներքո՝ դիմահայաց, լուսապսակով ու քրիստոնեական սրբի հանդերձանքով ((3բ), [Церковный календарь]: Աջ ձեռքում խաչ է, իսկ ձախում՝ մատյան՝ խաչի պատկերով: Կապույտ հատվածում վրա գրված է Ամնոնիոս Ալեքսանդրացու մասին. «Այս Ամովն Աղեքսանդրացի ... (դժվարընթեռնելի) 2^o համաբարտրառս սուրբ Ավետարանիս»:



Նկ. 2

¹ Ամնոնիոս Ալեքսանդրացու մասին առավել մանրամասն տե՛ս Bernabo Massimo, The Miniatures in the Rabbula Gospels: Postscripta to a Recent Book, Vol. 68, 2014, pp. 343-58, (link - https://www.academia.edu/20252399/M_Bernab%C3%B2_The_Miniatures_in_the_Rabbula_Gospels_Postscripta_to_a_Recent_Book_Dumbarton_Oaks_Papers_68_2014_pp_343_358, 21.02.2023), Crawford Matthew, Ammonius of Alexandria, Eusebius of Caesarea and the Origins Scholarship, New Testament Studies, Vol. 61, 2015, pp. 1-29 (link - https://www.academia.edu/6816607/Ammonius_of_Alexandria_Eusebius_of_Caesarea_and_the_Origins_of_Gospels_Scholarship, 21.02.2023), Eusebius, The Ecclesiastical history, L, 1949, p. XXV:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի N° 3756 Ավետարանի մանրանկարների քննություն

Ամոննիոս Ալեքսանդրացուն արևելաքրիստոնեական մանրանկարչական արվեստում քիչ են պատկերել: Մեզ հայտնի օրինակներից է Ռաբբուլայի Ավետարանում պահպանված մանրանկարը (Նկ. 3): Այս մանրանկարում Ամոննիոս Ալեքսանդրացին պատկերված է Եվսեբիոս Կեսարացու հետ տաղավարիկի ներքո: Կեսարացին կանգնած է ձախ մասում՝ ձեռքին գալարակ, իսկ Ալեքսանդրացին՝ աջ մասում՝ ձեռքն աղոթողի դիրքով: Նրանց բաժանում է կենտրոնական սյունը: Ամոննիոս Ալեքսանդրացին չափերով ավելի մեծ է պատկերված: Պավիայի համալսարանից միջնադարագետ Մ. Բերնարն չի բացառում, որ Ամոննիոս Ալեքսանդրացին ներկայիս դիրքով պատկերվել է հետագայում և նրա տեղում՝ Եվսեբիոսի կողքին, կարող էր մեկ ուրիշը պատկերված լինել [Bernabo Massimo, The Miniatures in the Rabbula Gospels: Postscripta to a Recent Book, link, 21.02.2023]: Այսպիսով, հարկ ենք համարում ընդգծել, որ մատենադարանյան մանրանկարը հայ մանրանկարչության պատմության մեջ Ավետարաններում հանդիպած մեզ հայտնի եզակի օրինակն է:

Խորանները, անվանաթերթերը և դրանց ոճային համակարգը: Ամոննիոս Ալեքսանդրացուն հաջորդում է Եվսեբիոս Կեսարացու նամակը Կարպիանոսին: Տեքստը վերցված է զարդանախշային քառակուսի շրջանակում: Շրջանակին կանգնած են երկու սիրամարգ, որոնց կենտրոնում բուսական նախշեր ունեցող շրջան է, որից դուրս են գալիս ծաղիկներ: Վասն խորանաց Ավետարանի մեկնության համաձայն ոսկեփետուր սիրամարգերը հրեշտակների անարատ բնության և նահապետների խորհուրդն ունեն [Ղազարյան, 1995, 119]:

Երկրորդ խորանը խորհրդանշում է անմարմինների (երկնայինների) միջին ու վերջին քահանայապետությունները, հրեշտակների փառքն ու անմահությունը [Ղազարյան, 1995, 21]: Այն համեմատվում է մովսեսյան խորանի հետ [Ղազարյան, 1995, 21]: Կամարների գտնվող ու ջրերի մեջ որս անող հավքերը՝ ձկնաքաղերը, կրում են Մկրտության խորհուրդը [Ղազարյան, 1995, 22]:

Սյուս խորանը բաղկացած է ուղղանկյուն գլխազարդից, երեք սյունից (Նկ. 4): Ուղղանկյուն գլխազարդը լցված է բուսական նախշերով: Գլխազարդին ու սյուների կողքին հավքեր են պատկերված: Խորանները բաժանված են տարբեր ձև ունեցող կամարներով: XII դարի խորաններին բնորոշ այս հատկանիշները տեղ են գտել նաև այլ Ավետարաններում: Մասնավորապես ՄՄ 3756, 2952, 7737 ձեռագիր մատյաններում բազմազան են խորանների գլխազարդերի ձևերն ու կտրվածքները (խորան 6-րդ ու 7-րդ (Նկ. 5-6), [Казарян, Манукян, 1991, 69]: Վեցերորդ խորանի գլխազարդին պատկերված են դեղնակտուց կաքավներ, որոնք իրարից բաժանված են բուսական զարդանախշով, ինչի վերջավորությունները վերածված են շուշանածաղիկի: Սյուները միանում են գլխազարդին իրար վրա դրված երկու մույթերով:

Յոթերորդ խորանի (Նկ. 6) գլխազարդին կրկին պատկերված են կարմրապոչ ու կարմրակտուց կաքավներ: Կաքավների միջև շուշանածաղիկ է, որն ամբողջությամբ տարածված է գլխազարդի վերին հատվածում: Դեղին սյուները գլխազարդին միանում են իրար վրա դրված կրկնակի մույթերով՝ դեղին ու կարմիր: Փոխվում է գլխազարդերի ու սյուների հարաբերակցությունը՝ բարձրությամբ հավասարվելով իրար (խորան 10-րդ, (Նկ. 7)): Բուսական մոտիվները, որոնցով լցված են խորանների գլխազարդերը, մեծապես տարբերվում են իրարից: Խորանների գլխազարդերի շուրջ ներկայացվում են բազմաթիվ խորհրդանշական կենդանիներ, թռչուններ ու բույսեր, որոնք միաժամանակ տեղ են գտել սյուների կողքին (Նկ. 5-6), [Казарян,

Манукян, 1991, 69]: Տասներորդ խորանը բազմապիսի խորհուրդներ ունի, ինչպես ութերորդն ու իններորդը: Այն խորհրդանշում է Սողոմոնյան տաճարը, ծաղկող խաչը, Հարության գուշակությունը, ամենակատար, սուրբ ու կաթողիկե եկեղեցին, որը բովանդակում է բոլոր խորհուրդները, նաև երկնային խորանը [Ղազարյան, 1995, 28-29]: Բուսական նախշերով լի գլխազարդի աջ մասում երկու հավք են, իսկ ձախ մասում նոնենի է: Նոնենիների պատկերումը հիմնականում խորհրդանշում է մարգարեների խոսքը [Ղազարյան, 1995, 28-29]:

Սովորաբար խորանների նկարագրողման համակարգը չի հետևում մեկ մեկնիչի մեկնությանը: Դրանց նկարագրողման համակարգում կան առանձին համընկնումներ: Այդ համընկնումները վերաբերում են նաև գույների մեկնությանը: Մասնավորապես, առաջին խորանում գերակշռող չորս գույները՝ կապույտ, կարմիր, ոսկեգույն, կանաչ, խորհրդանշում են չորս նյութերը [Ղազարյան, 1995, 20]: Գրիգոր Տաթևացու ու Ստեփանոս Ձիգ Ջուղայեցու մեկնությունների համաձայն՝ առաջին խորանը համարվում է աստվածային, իսկ օգտագործված ոսկեգույնը խորհրդանշում է Տիրոջ անսուտ ու անապական խոսքերը այստեղ, ինչպես ասաց, թե երկինքն ու երկիրը կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի [Ղազարյան, 1995, 97]: Երկրորդ խորանի գլխազարդը լցված է կարմիր նախշերով, որը խորհրդանշում է Մելքիսեդեկի խորանը՝ ի դեմս Քրիստոսի [Ղազարյան, 1995, 21]: Կարմիր են նաև սյուների մույթերը: Կանաչը հրեշտակների անվախճան կյանքի խորհուրդն ունի [Ղազարյան, 1995, 21]: Ըստ մեկնությունների՝ երրորդ խորանը պետք է պարունակի չորս գույն՝ խորհրդանշելով Աստվածահայտնությունը կամ չորս տարերքները, սակայն այստեղ առնվազն 5-6 գույների օգտագործում կա: Սա խոսում է այն փաստի մասին, որ խորանների նկարագրողման համակարգը այստեղ ևս չի հետևում մեկ մեկնիչի մեկնությանը: Խորանում տեղ գտած կապույտը խորհրդանշում է մարդու անկումը փառքից [Ղազարյան, 1995, 23]: Չորրորդ խորանի հիմնական գույներն են՝ կարմիրը, դեղինը, նարնջագույնը, կանաչը: Կարմիրը խորհրդանշում է մարգարեների նշած փրկությունը [Ղազարյան, 1995, 23]: Հինգերորդ խորանն առանձնանում է իր նրբությամբ: Գլխազարդը լի է բուսական զարդանախշերով: Հիմնական գույներն են՝ կանաչը, դեղինը, նարնջագույնը: Ինչպես վերը նշվեց, հազվադեպ է լինում, երբ խորաններն ամբողջությամբ համապատասխանում են մինչ այժմ գիտական գրականության մեջ հայտնի խորանների մեկնություններին: Դրանով պայմանավորված մենք չենք ներկայացնում ՄՄ 3756 մատյանի 6-10-րդ խորանների գույների մեկնությունները: Աստղիկ Գևորգյանն անդրադառնալով Ավետարանի խորանագրերին՝ նշում է, որ մատյանի նկարչական արվեստը հիշեցնում է Նախիջևանի նկարիչ Սիմեոնի ձեռագիրը (Ձեռ. 3722, [Գևորգյան Ա, 2005, 38]: Մինչդեռ ձեռագրերի մանրանկարների համեմատությունն այլ բան է մեզ հուշում: Խորաններին հաջորդում են ավետարանիչների դիմանկարներն ու անվանաթերթերը: Մատթեոսն այստեղ ներկայացված է ճերմակահեր ծերունու տեսքով ու քրիստոնեական սրբերի հագուստով (Նկ. 8), [Церковный календарь]: Գլխին շրջանաձև լուսապսակ է, իսկ հայացքն ուղղված է դեպի ձախ: Կարմիր երկարուկ բարձին նստած Մատթեոսի դիմաց գրակալ է, որի վրա էլ դրված է Ավետարանը: Բավականին հետաքրքրական տեսք ունի ավետարանչի դեմքը: Պատկերի խորքի գերակշիռ մասը զբաղեցնում է կապույտը, որտեղ գրված է «Մատթեոս ավետարանիչ»: Ամբողջ պատկերը վերցված է ուղղանկյուն շրջանակում, որի ներսում դեղին հյուսածո շղթա է, իսկ ուղղանկյուն շրջանակն ամբողջությամբ եզերվում է նարնջագույնով:

Հաջորդը Մարկոս ավետարանչի պատկերն է, որտեղ նա նստած է աթոռին դրված

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի N° 3756 Ավետարանի մանրանկարների քննություն

երկարուկ բարձին (Նկ. 9): Դիմացը փոքրիկ գրակալ է, որին հենված է գալարակը: Հագուստը, ինչպես Մատթեոսի դեպքում, ծալքավոր է: Գլուխը վերցված է շրջանաձև լուսապսակում: Վերևի հատվածում գրված է «Մարկոս ավետարանիչ»: Դեմքն ավելի երիտասարդ է: Նկարի խորքն ամբողջությամբ լցված է մուգ կապույտով: Ավետարանչի պատկերը վերցված է ուղղանկյուն հյուսածո շրջանակում: Շրջանակի ձախ անկյունում Մարկոսի խորհրդանիշ առյուծի պատկերն է, որը ևս լուսապսակով է: Ավետարանիչներին իրենց խորհրդանիշների հետ պատկերելը տարածված է եղել դեռ Օտտոնյան գրքարվեստում [Mayr-Harting, 1991, 1999, Illustrations 123, 124]:

Միևնույն դիմագծերը (սրածայր աչքեր և քիթ), ճարտարապետական խորքը շարունակվում են Ղուկաս ավետարանչի մանրանկարում (Նկ. 10): Ողջ պատկերը կրկին վերցված է ուղղանկյուն շրջանակում, որի կենտրոնում կարմիր երկարուկ բարձին նստած է Ղուկաս ավետարանիչը: Գլուխը վերցված է շրջանաձև լուսապսակում: Վերին հատվածում գրված է. «Ղուկաս ավետարանիչ»: Շրջանակի ձախ անկյունում Ղուկասի խորհրդանիշ եզան պատկերն է, որը լուսապսակով է: Պատկերի խորքը լցված է բաց կապույտով: Մյուս մանրանկարը Հովհաննես ավետարանչի ու նրա աշակերտ Պրոքորոսի պատկերն է (Նկ. 11): Հովհաննեսը պատկերված է մանրանկարի աջ հատվածում ու աջ ձեռքով ցույց է տալիս Պրոքորոսին, իսկ ձախ ձեռքը աղոթողի դիրքով է: Կարմիր երկարուկ բարձին նստած Պրոքորոսը կրում է դեղին ու վարդագույն ծալքավոր հագուստ, իսկ Հովհաննեսը՝ կարմիր ու կանաչ: Գլուխները վերցված են շրջանաձև լուսապսակում: Երկուսն էլ հայացքներն ուղղել են դեպի նույն կողմը: Պատկերի խորքը լցված է կապույտ գույնով, որի վրա գրված է. «Հովհաննես ավետարանիչ» ու «Պրոխորոս»: Հովհաննեսի դիմաց պատկերված է նրա խորհրդանիշ արծիվը՝ կրկին լուսապսակով: Մանրանկարի աջ անկյունում աստղազարդ երկնքից երևում է Տիրոջ աջը: Ամբողջ պատկերը վերցված է ուղղանկյուն շրջանակում: Յուրաքանչյուր ավետարանչի պատկերի հաջորդում է իր անվանաթերթը: Սովորաբար նկարիչներն ավելի մեծ ուշադրություն են դարձրել անվանաթերթերի սկզբնատառերին, ինչպես ավետարանիչների խորհրդանիշներով (ՄՄ 379, 3756, 6264, 2952, 7737), այնպես էլ առանց դրանց (ՄՄ 6249, 4753, 10360, 7635, 313), [Казарян, Манукян, 1991, 72]:


Անվանաթերթերի սկզբնատառերի զարգացմանը զուգահեռ զարգացում են ապրում նաև բնագրի սկզբնատառերը. դրանք առանձնանում են ոսկով (ՄՄ 2952, 7737), չափերով (ՄՄ 379, 7737), գույնով (ՄՄ 6249, 7635), նկարը բարդանում է (ՄՄ 7737, 3756, 6249), կարմիր թանաքով երբեմն արվում են նաև ավետարանների վերջաբանները (ՄՄ 3756), [Казарян, Манукян, 1991, 75-76]: Ավետարանիչների անվանաթերթերը մշակված են գրեթե նույն սկզբունքով: Էջի վերին կենտրոնական մասը զբաղեցնում է գլխազարդը, աջ հատվածը՝ բուսական լուսանցազարդը, որը հիմնականում ավարտվում է խաչով, իսկ խաչի ու բուսական զարդանախշի մեջտեղում թռչուն է: Գլխազարդից ներքև սկսվում է ավետարանական բնագիրը, որի սկզբնատառը զարդագիր է՝ չափերով շատ ավելի մեծ ու լցված բուսական նախշերով: Նրբորեն մշակված այդ զարդագրերը հիմնականում զբաղեցնում են էջի 1/2-րդ մասը: Այդ սկզբունքն է օգտագործված Մատթեոսի ու Ղուկասի անվանաթերթերում (Նկ. 12, 13): Բնագրերի սկզբնատառերը նրբորեն միահյուսված են գլխազարդին: Ղուկասի անվանաթերթում տեքստի «Ք» զարդագրի գլխի հատվածը կարծես նման լինի թռչնի գլխի: Վարպետորեն է մշակված Մարկոսի անվանաթերթը: Գլխազարդի խորքը զբաղեցնող դեղինը ոսկե դաշտի տպավորություն է թողնում՝ միահյուսվելով զարդանախշերին: Ի

տարբերություն մյուս անվանաթերթերի՝ Հովհաննեսի դեպքում «Ի» հյուսածո սկզբնատառը զբաղեցնում է էջի ամբողջ ձախ հատվածը՝ վերից վար, որը միանում է հնգակամար գլխազարդին: Անվանաթերթերից որևէ մեկը նույնությամբ չի կրկնում մյուսին: Բուսական նախշերով լցված գլխազարդերը տարբերվում են գույների համադրությամբ ու կամարաշարերով: Անվանաթերթերի բնագրի աջ մասը զբաղեցնող բուսական նախշերը ևս չեն կրկնում իրար:

Եզրակացություններ: ՄՄ 3756 Ավետարանի մանրանկարների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ դրանց ծաղկողը եղել է նույն անձը: Բավականին հետաքրքիր է ծաղկողի ոճը: Ավետարանիչների պատկերների դեպքում հանդիպում ենք միևնույն դիմագծերին՝ սուր աչքեր ու քիթ, մազերի միևնույն հյուսվածք: Նրանց այտերին ու ճակատին կարմիր նշաններ են արված: Ավետարանը ծաղկող նկարիչն իր վարպետությունն է ցուցադրել գույների հետ աշխատելիս:

Ձեռագիրն առանձնանում է նաև Ամոննիուս Ալեքսանդրացուն պատկերող մանրանկարով: Ամոննիուսի պատկերին հաջորդող խորանների միջոցով հնարավորություն է ստեղծվում հետևելու գլխազարդերի ու լուսանցազարդերի զարգացմանը: Խորաններն աչքի են ընկնում իրենց զարդաձևերի բազմազանությամբ: Ուղղանկյուն գլխազարդերը բաժանված են տարբեր ձևերի: Հավասարվում են գլխազարդերի ու սյուների չափերը: Ավելի շատ ուշադրություն է դարձվում անվանաթերթերի սկզբնատառերին, որոնք նրբորեն ձուլված են գլխազարդերին: Խորաններում տեղ գտած մի շարք կենդանիների պատկերման խորհուրդը հնարավոր չէ պարզել մինչ օրս հայտնի մեկնությունների միջոցով: Մանրանկարների ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ ծաղկողը ծանոթ է եղել նախկին Մեծ Հայքի մանրանկարչական դպրոցին, չի բացառվում նաև ուղղակիորեն կամ անուղղակիորեն բյուզանդական օտտոնյան գրքարվեստին: Այս մատյանի մանրանկարների միջոցով հնարավորություն է ստեղծվում տեսնելու XII դարի հայկական մանրանկարչական արվեստի զարգացման միտումները և բնորոշ գծերը:

Նկարների ցանկ



Նկ. 3




Նկ.4 Խորան

Եվսեբիոս Կեսարացի և Ամոննիուս Ալեքսանդրացի Ռաբբուլայի Ավետարան (<https://bit.ly/3uMa3AZ>)




Նկ. 5 Խորան



Նկ. 6 Խորան



Նկ. 7 Խորան




Նկ. 8 Մատթեոս ավետարանիչ



Նկ. 9 Մարկոս ավետարանիչ




Նկ. 10 Ղուկաս ավետարանիչ



Նկ. 11 Հովհաննես ավետարանիչ և Պրոքրոն



Նկ. 12 Մատթեոսի անվանաթերթ



Նկ. 13 Ղուկասի անվանաթերթ

Գրականության ցանկ

Ազարյան Լ., 1964, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., Երևան, 297 էջ:

Ալիշան, 1890, Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 590 էջ:

Ալիշան, 1893, Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց Աշխարհի, Վենետիկ, 561 էջ:

Արքեպիսկոպոս Միրմեհան Ա., 1948, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի, հ. Ա, Սուրբ Ղազար, 374 էջ:

Գևորգյան Ա., 2005, Անանուն հայ մանրանկարիչներ, Մատենագիտություն, IX-XVII դդ., Կահիրե, 685 էջ:

Եզանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ., 1965, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1634 էջ:

Հայկական մանրանկարչություն, Մատենադարանի ժողովածու, 2014, Երևան, Նաիրի, 311 էջ:

Հայկական մանրանկարչություն, Միսիթարեան մատենադարան ձեռագրաց, 1966, հ. Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 62 էջ:

Ղազարյան Վ., 1995, Խորանների մեկնություններ, Երևան, 191 էջ:

Дурново Л., 1957, Краткая история древнеармянской живописи, Ереван, 58 стр.:

Измайлова Т., 1979, Армянская миниатюрная живопись XII века (по нескольким рукописям Матенадарана), Երևան, ՊԲՀ, № 4, էջ 165-171:

Измайлова Т., 1983, Декор двух датированных и локализованных армянских рукописей XII века, Երևան, ՊԲՀ, № 2-3, էջ 240-248:

Измайлова Т., 1975, Заглавные листы Харбердской рукописи 1160 г., Երևան, ՊԲՀ., № 4, էջ 154-168:

Измайлова Т., 1974, Каринская рукопись 1186 г. (Иван С-65), Երևան, ՊԲՀ, № 1, էջ 259-268:

Измайлова Т., 1987, Маргинальный декор Ованаванского мартиролога-чарынтира, Երևան, ՊԲՀ, № 1, էջ 183-194:

Измайлова Т., 1989, Мастер и образец. Ромклайская модель, вторая половина XII-начало XIII века, Երևան, ՊԲՀ, № 3, էջ 174-191:

Казарян В., Манукян С., 1991, Матенадаран, Армянская рукописная книга VI-XIV веков, Москва, 282 стр.:

Bernabo M., 2014, The Miniatures in the Rabbula Gospels: Postscripta to a Recent Book, Vol. 68, pp 343-58, (link -

https://www.academia.edu/20252399/M_Bernab%C3%B2_The_Miniatures_in_the_Rabbula_Gospels_Postscripta_to_a_Recent_Book_Dumbarton_Oaks_Papers_68_2014_pp_343_358 , 21.02.2023):

Crawford M., 2015, Ammonius of Alexandria, Eusebius of Caesarea and the Origins Scholarship, New Testament Studies, Vol. 61, pp. 1-29 (link -

https://www.academia.edu/6816607/Ammonius_of_Alexandria_Eusebius_of_Caesarea_and_the_Origins_of_Gospels_Scholarship, 21.02.2023):

Cross F. 1974, The Oxford Dictionary of the Christian Church, London, 1518 p.

Der Nersessian S., 1973., Armenian Manuscripts in the Walters Art Gallery, Baltimore, 108 p.

Der Nersessian S., 1993, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, Vol. I, Washington, 198 p.

Eusebius, 1949, The Ecclesiastical history, L, 524 p.

Mayr-Harting H., 1999, Ottonian book illumination. An historical study, Harvey Miller publishers, London, 531 p.